ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2021 թվականի հունիսի 24-ի, ժամը 12:00-ի նիստի
N 12 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- Տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի ասիստենտ, տնտեսագիտության թեկնածու **Անահիտ Վանիկի Մկրտչյանի «Դիսկրետ մաթեմատիկա (տնտեսագետների համար)»** ուսումնական ձեռնարկի հրատարակությունը երաշխավորելու մասին հարցը:

Զեկուցող՝ գիտության գծով պրոռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, դոցենտ **Թ.Մ.Մկրտչյան:**

Զեկուցողը նշեց. «Դիսկրետ մաթեմատիկան» մաթեմատիկայի բաժին է, որն ուսումնասիրում է դիսկրետ բնույթ ունեցող կառուցվածքների հատկությունները, դրանց հետ կապված քանակական մեծությունները: Այն լայնորեն կիրառվում է գիտության տարբեր ոլորտներում, այդ թվում նաև տնտեսագիտության մեջ: Ներկայացված ուսումնական ձեռնարկում հեղինակը պարզաբանում է դիսկրետ մաթեմատիկայի այնպիսի սկզբունքներ, կանոններ, բանաձևեր և գործնական խնդիրներ, որոնք անմիջականորեն են կապված տնտեսագիտության մեջ կիրառվող մաթեմատիկական մեթոդների ու խնդիրների հետ և ընդհանրապես տնտեսագիտության՝ որպես գիտության առանձին ճյուղի հետ: Հեղինակը ներկայացրել է նաև այնպիսի սկզբունքներ և խնդիրներ, որոնք միջնորդավորված են կապված տնտեսագիտության հետ, սակայն խիստ օգտակար են ապագա տնտեսագետների տրամաբանության զարգացման և տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մեթոդների կիրառման հմտություններ ձեռք բերելու համար: Ուսումնական ձեռնարկի վերաբերյալ ստացվել է 2 (երկու) դրական կարծիք.

1) Ա.Վ.Եգանյան՝ Խ.Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի դասախոս, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, դոցենտ:

2) Ալիսա Միրումյան՝ «Տեսնում եմ» ՍՊԸ տնօրեն, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու:

Բոլոր կարծիքներում նշվում է, որ ներկայացված ուսումնական ձեռնարկը շարադրված է մատչելի լեզվով, այն հագեցած չէ բարդ մաթեմատիկական դուրսբերումներով, ինչը հատուկ է դիսկրետ մաթեմատիկայի մյուս դասագրքերին, այլ տեսությունը բացատրված է պարզ օրինակներով՝ միևնույն ժամանակ քննարկելով դիսկրետ մաթեմատիկայի

օրինակներով՝ միևնույն ժամանակ քննարկելով դիսկրետ մաթեմատիկայի առանցքային բաժիններ: Այն նախատեսված է բարձրագույն տնտեսագիտական ուսումնական հաստատությունների բակալավրի ուսանողների, մագիստրանտների, ասպիրանտների, ինչպես նաև դիսկրետ մաթեմատիկայով հետաքրքրվող անձանց համար:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հիմք ընդունելով գրախոսների դրական կարծիքները, տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի, ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետի խորհրդի և գիտական խորհրդին կից հրատարակչական հանձնաժողովի նիստերի որոշումները՝ տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի ասիստենտ, տնտեսագիտության թեկնածու **Անահիտ Վանիկի Մկրտչյանի «Դիսկրետ մաթեմատիկա (տնտեսագետների համար)»** ուսումնական ձեռնարկը երաշխավորել հրատարակության (որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ, միաձայն՝ կողմ՝ 58, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Ռ. Գալոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Հ. Դարբինյան**

2021 թ. հունիսի 24

Երևան

ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2021 թվականի հունիսի 24-ի, ժամը 12:00-ի նիստի
N 12 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- Լեզուների ամբիոնի դոցենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու **Ռուզաննա Ռուբենի Սարգսյանի** և նույն ամբիոնի դոցենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու **Ալլա Եփրեմի Մկրտչյանի «Русский язык для студентов экономического профиля: учебное пособие»** ուսումնական ձեռնարկի հրատարակությունը երաշխավորելու մասին հարցը:

Զեկուցող՝ գիտության գծով պրոռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, դոցենտ **Թ.Մ.Մկրտչյան:**

Զեկուցողը նշեց. ներկայացված ուսումնական ձեռնարկը նախատեսված է ՀՀ բուհերի բակալավրիատում սովորող տնտեսագետ ուսանողների համար: Այն մեկ տարի հաջողությամբ անցել է փորձաշրջան, կազմված է բակալավրիատի ռուսաց լեզվի դասընթացի ծրագրին համապատասխան: Ձեռնարկը Moodle հեռավար ուսուցման հարթակում մշակված «Ռուսաց լեզու» էլեկտրոնային դասընթացի բաղկացուցիչ մասն է, որի հիմնական նպատակն է ստեղծել անհրաժեշտ լեզվական բազա, ուսանողների մոտ ձևավորել խոսքի հմտություններ և կարողություններ ռուսերենով մասնագիտական գործունեություն իրականացնելու համար: Ձեռնարկում ներկայացված են խոսքի գործունեության ընկալունակ և արդյունավետ տեսակների զարգացման վրա հիմնված առաջադրանքներ, որոնք նպատակ ունեն զարգացնելու ուսանողների գրավոր և բանավոր խոսքը, կատարելագործելու լեզվական հմտությունները: Հատուկ շեշտ է դրվում խոսքի գործունեության բոլոր չորս տեսակների զարգացման վրա (ընթերցանություն, խոսակցություն, ունկնդրում, գիր): Ուսումնական ձեռնարկը բաղկացած է 22 թեմայից: Հատկապես հետաքրքիր են «Это интересно знать» խորագիրը, դասերի թեմաներին վերաբերող թարգմանությունները, ինֆոգրաֆիկաները որպես տեղեկատվական աղբյուր, թեմաների արդիականությունը և այլն: Ուսումնական ձեռնարկի վերաբերյալ ստացվել է 2 (երկու) դրական կարծիք.

1) Էրիկա Ռոմիկի Ավակովա՝ Երևանի Վալերի Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի ռուսաց և սլավոնական լեզուների ամբիոնի դոցենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ:

2) Նաիրա Իգնատիոսի Մարտիրյան՝ Երևանի պետական համալսարանի ռուս բանասիրության ֆակուլտետի ռուսաց լեզվաբանության, տիպաբանության և հաղորդակցման տեսության ամբիոնի դոցենտ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ:

Բոլոր կարծիքներում նշվում է, որ ներկայացված ուսումնական ձեռնարկը նպատակաուղղված է տնտեսագետ ուսանողների մոտ զարգացնել ռուսերենով մասնագիտական գրականություն ընթերցելու հմտություններ, կուտակել տնտեսագիտության բնագավառին և գործարար ոլորտին վերաբերող համապատասխան բառապաշար, զարգացնել ուսանողների մասնագիտական բանավոր խոսքը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հիմք ընդունելով գրախոսների դրական կարծիքները, լեզուների ամբիոնի, կառավարման ֆակուլտետի խորհրդի և գիտական խորհրդին կից հրատարակչական հանձնաժողովի նիստերի որոշումները՝ լեզուների ամբիոնի դոցենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու **Ռուզաննա Ռուբենի Սարգսյանի** և նույն ամբիոնի դոցենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու **Ալլա Եփրեմի Մկրտչյանի «Русский язык для студентов экономического профиля: учебное пособие»** ուսումնական ձեռնարկը երաշխավորել հրատարակության (որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ, միաձայն՝ կողմ՝ 58, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Ռ. Գալոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ե. Հ. Դարբինյան**

2021 թ. հունիսի 24
Երևան

ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2021 թվականի հունիսի 24-ի, ժամը 12:00-ի նիստի
N 12 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- Լեզուների ամբիոնի դասախոս **Քրիստինա Մելսի Թորգոմյանի «English for IT Students»** ուսումնական ձեռնարկի հրատարակությունը երաշխավորելու մասին հարցը:

Զեկուցող՝ գիտության գծով պրոռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, դոցենտ **Թ.Մ.Մկրտչյան:**

Զեկուցողը նշեց. ներկայացված ուսումնական ձեռնարկը նախատեսված է «Տեղեկատվական տեխնոլոգիաները բիզնեսում» մասնագիտության ուսանողների, ինչպես նաև գործարարության ոլորտի այն մասնագետների համար, որոնք հատկապես հետաքրքրված են տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ գործարարության, մարքեթինգի, կառավարման, նախագծերի կառավարման, հաշվապահական հաշվառման և ֆինանսների ոլորտներում: Ուսումնական ձեռնարկը միտված է զարգացնելու ուսանողների անգլերենով կարդալու, խոսելու, քննարկելու և գրելու հմտությունները: Այն ունի նաև տեղեկատվական բնույթ, քանի որ ծանոթացնում է ուսանողներին գործարար ոլորտին վերաբերող կարևորագույն թեմաներին ու հիմնախնդիրներին: Ձեռնարկը բաղկացած է 12 թեմայից, որոնք վերաբերում են գործարար աշխարհի տարբեր ոլորտներում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմանը: Այն ընդգրկում է ընդհանուր և մասնագիտական բառապաշարը զարգացնող և հարստացնող վարժություններ, ստեղծագործական հմտությունները զարգացնող էսսեներ: Յուրաքանչյուր թեմա ներառում է ընթերցած նյութի ընկալումը զարգացնելու, վերլուծելու և դրա շուրջ բանավիճելու հմտությունը: Ուսումնական ձեռնարկի վերաբերյալ ստացվել է 2 (երկու) դրական կարծիք.

1) Քրիստինա Վարազդատի Մկրտչյան՝ Երևանի պետական համալսարանի եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի անգլերենի թիվ 1 ամբիոնի դոցենտ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ:

2) Քրիստինե Մուրադի Հարությունյան՝ Երևանի պետական համալսարանի եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ:

Բոլոր կարծիքներում նշվում է, որ ներկայացված ուսումնական ձեռնարկը շարադրված է մատչելի ձևով, ներառում է այն հիմնադրույթները, որոնք ուսումնասիրվում են տնտեսագիտության ոլորտի մասնագիտացման շրջանակներում: Ձեռնարկում ներկայացված ու մեկնաբանված նյութերը համապատասխանում եմ տնտեսագիտության ոլորտին առնչվող մասնագիտություններին: Այն իր ուրույն տեղը կարող է զբաղեցնել թվային միջավայրում աշխատող տնտեսագետների և գործարարների համար, ինչպես նաև արդյունավետորեն կիրառվել գործարար անգլերեն ուսումնասիրողների համար:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հիմք ընդունելով գրախոսների դրական կարծիքները, լեզուների ամբիոնի, կառավարման ֆակուլտետի խորհրդի և գիտական խորհրդին կից հրատարակչական հանձնաժողովի նիստերի որոշումները՝ լեզուների ամբիոնի դասախոս **Քրիստինա Մելսի Թորգոմյանի «English for IT Students»** ուսումնական ձեռնարկը երաշխավորել հրատարակության (որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ, միաձայն՝ կողմ՝ 58, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Ռ. Գալոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Հ. Դարբինյան**

2021 թ. հունիսի 24
Երևան